ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

18 հուլիսի 2013թ. ք. Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ռ. ՍԻՆՈՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝ Ա. Լոպոյան
Կ. Նալբանդյան
Հ. Իգիթյան
Ա. Հարությունյան
Գ. Մխիթարյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Մրցումների կազմակերպման և անցկացման բաժանմունքի պետ Ա. Լոպոյանի 16.07.2013թ. զեկուցագրի քննարկման մասին /զեկուցող Ա. Լոպոյան/

2. Մանկապատանեկան բաժանմունքի ավագ մասնագետ Գ. Մխիթարյանի 17.07.2013թ. զեկուցագրի քննարկման մասին /զեկուցող Գ. Մխիթարյան/

3. Արարատի մարզի ներկայացուցիչ Խ. Սահակյանի 02.07.13թ. զեկուցագրի քննարկման մասին /զեկուցող Գ. Մխիթարյան/

1. Մրցումների կազմակերպման և անցկացման բաժանմունքի պետ Ա. Լոպոյանի 16.07.2013թ. զեկուցագրի քննարկման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Շիրակ-2» թիմին մուտքավճարը (1200000 դր.) և հայտը (6 օր) ուշացնելու համար՝

1.1 ՀՖՖ-ի մրցումների անցկացման կանոնագրքի 23-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 240000 դրամ:

1.2 ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլային ակումբին տուգանել 30000 դրամ:

2. Մանկապատանեկան բաժանմունքի ավագ մասնագետ Գ. Մխիթարյանի 17.07.2013թ. զեկուցագրի քննարկման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Գորիսի մանկապատանեկան մարզադպրոցի հավաստագիրը ընդունել, ուշացնելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի համաձայն՝ Գորիսի մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 10000 դրամ:

3. Արարատի մարզի ներկայացուցիչ Խ. Սահակյանի 02.07.13թ. զեկուցագրի քննարկման մասին /զեկուցող Գ. Մխիթարյան/

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Մխչյանի գյուղապետարանի հավաստագրով ներկայացրած «Մխչյան-99» թիմին նախորդ խաղաշրջանի պարտքը չմարելու պատճառով մերժել Մ-15 առաջնությանը մասնակցելու իրավունքից:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԼՈՊՈՅԱՆ